

ՔԱՂՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՋ**

Գոռ ՄՈՎՍԻՍՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
անբիռնի ասպիրանտ*

Ներածություն. Բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման և մարդու կենսագործունեության միջավայրի պահպանության հարաբերությունների աստիճանական զարգացումը պահանջեց առաջնային ռեզուլիտիվ գործոնի կարգավորիչ ազդեցության շարունակական ընդլայնում, որի արդյունքում ձևավորվեց էկոլոգիական իրավունքի գիտությունը՝ որպես ճյուղային իրավաբանական գիտություն:

Էկոլոգիական իրավունքի գիտության կուտակած իմացության ոչ բավարար մակարդակի հետևանքով տարբեր ինստիտուտների, նաև՝ բնական ռեսուրսների պետական կառավարման ինստիտուտի ուսումնասիրության ընթացքում որպես հիմնահարց առաջ են մղվում դրանց մշակվածության, տեսական իմաստավորման, հիմնավորվածության, համապատասխան հայեցակարգերի և տեսությունների գնահատման, եզրութային միասնականության ասպահովման խնդիրները:

Որոշ նկատառումներ էկոլոգիական իրավունքի գիտական կարգավիճակի վերաբերյալ

20-րդ դարի բնապահպանական զարգացումների ընթացքում գիտությունը ոչ միայն զարգացման գործոն էր, այլև՝ քննադատության առարկա: Մարդու կենսագործունեության միջավայրի որակի վատթարացման պատճառների շարքում հեղինակներն առանձնացրին նաև գիտատեխնիկական առաջընթացը, ինչը համարում ենք

անթույլատրելի: Գիտության զարգացման ամբողջ ընթացքը և դրա արդյունքների ներդրումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում եղել է օրինաչափ: Ներկայումս գործնականում ապացուցվում է, որ գիտության ձեռքբերումների կիրառմամբ հնարավոր է իրականացնել ռեսուրսների արդյունավետ օգտագործում և ապահովել շրջակա միջավայրի պահպանություն:

Էկոլոգիական իրավունքի գիտության ռուսական դպրոցի ներկայացուցիչ Վ. Պետրովի կարծիքով՝ աշխարհում շրջակա միջավայրի պահպանության խնդրի սրացման հետևանքով էկոլոգիական հիմնախնդիրները դուրս բերվեցին նեղ մասնագետների ուսումնասիրության շրջանակից՝ դարձնելով դրանք ժամանակակից ամենակարևոր գիտություններից մեկի հիմքը: Իրականում որևէ գիտություն մյուսի նկատմամբ առավելություն ունենալ չի կարող, որովհետև, հասարակական կյանքի հրամայականներով պայմանավորված, մի գիտական ուղղություն կարող է ընդամենը ժամանակավորապես կոնսերվացնել մյուսների զարգացումը: Ինչ վերաբերում է «էկոլոգիա» գիտության կարգավիճակին, ապա վերջինիս գոյությունը հնարավոր չէ պայմանավորել շրջակա միջավայրի որակի վատթարացմամբ: Նշված գիտնականի արտահայտած կարծիքները մենք ընդունում ենք վերապահությամբ, քանի որ նրա մի շարք եզրահանգումներ էկոլոգիական իրավունքի ծագման, ձևավորման հիմքերի վերաբերյալ ուղղակիորեն կասկածի տակ են դնում նրա իրազեկությունը քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ՝ թեկուզև տվյալ ժամանակահատվածում: Ըստ Վ. Պետրովի՝ սոցիալական էկոլոգիայի շրջա-

նակներում ձևավորվել է իրավական էկոլոգիան: Նախ՝ անհասկանալի է, թե ինչ է նշանակում իրավական էկոլոգիա, բացի այդ՝ բավական կասկածելի է սոցիալական էկոլոգիայի ուսումնասիրության առարկայի դուալիզմը՝ սոցիալական և բնական ոլորտների հստակ տարանջատման բացակայության պատճառով: Միաժամանակ անհերքելի է էկոլոգիական իրավունքի՝ իրավագիտության համակարգում ձևավորվելու և կայանալու փաստը:

Մեր ուսումնասիրած որոշ գիտական աղբյուրներ, որոնք շարադրվել են 1960-80-ական թվականներին՝ դեռևս ԽՍՀՄ գոյության տարիներին և վերաբերում են ինչպես բնապահպանական խնդիրներին, այնպես էլ էկոլոգիական իրավունքին, ունեն մեկ կարևոր ընդհանրություն. դրանցում անընդհատ շեշտվում է, որ 20-րդ դարի երկրորդ կեսին շրջակա միջավայրի պահպանությունը դարձել է համաշխարհային ամենահրատապ հիմնախնդիրներից մեկը, և որ ժամանակակից էկոլոգիական իրավիճակը բնութագրվում է մարդուն շրջապատող միջավայրի բնական ներուժի վրա բացասաբար ազդող ժանրաբեռնվածության աճով²: Շարադրանքը հիմնականում հնչում է որպես եզրակացություն, սակայն պարզ չէ այդ եզրակացությունների փորձառական հիմքը: Այդ աղբյուրները դոգմատիկ են, շարադրված նյութը մեծ մասամբ չի համապատասխանում գիտական իմացությանը վերաբերող հիմնավորվածության, հավաստիության, հստակության և համակարգվածության չափանիշներին³:

Հիմնախնդրի քննարկումը տեղափոխելով էկոլոգիական իրավունքի գիտության հարթություն և ուսումնասիրելով համապատասխան գրականության զարգացման ընթացքը՝ կարելի է փաստել, որ անորոշ, ընդհանուր ձևակերպումներ և բովանդակություն ունեցող աղբյուրներին աստիճանաբար փոխարինելու են գալիս որոշակիություն, դիսցիպլինար կառուցվածք ունեցող, իրավական կարգավորման հստակ շրջանակ ընդգծող աղբյուրներ:

Շատ հեղինակներ նույնպես փաստում են, որ էկոլոգիական-իրավական ուսումնասիրությունները չունեն այնպիսի հաստատուն ավանդույթներ, ինչպիսին, օրինակ, բնորոշ է քաղաքացիականական քրեական հետազոտություններին: Այդուհանդերձ, նրանց կարծիքով, այսօր արդեն հրապարակվել են բավարար քանակությամբ աշխատանքներ, որոնցում ավելի կամ պակաս խորությամբ ուսումնասիրվել են գիտական հանրությանն անհանգստացնող հիմնահարցերը⁴: Այս համատեքստում ցանկանում ենք մշել, որ էկոլոգիական իրավունքի կարգավորման առարկայի կամ անվանման հարցի վերաբերյալ հիմնահարցը հանգուցալուծվեց ընդամենը 1990-ական թվականների վերջին Օ. Կոլբասովի և Մ.Բրինչուկի «Պետություն և իրավունք» պարբերականում տպագրված հոդվածներում: «Եզրութաբանական խարխափումներ էկոլոգիայում» վերտառությամբ 1999 թվականին հրապարակված հոդվածում⁵ Օ. Կոլբասովը հերքեց նույն պարբերականում 1998 թվականին Մ. Բրինչուկի հրապարակած «էկոլոգիական իրավունքի հասկացությունների ապարատի մասին» վերտառությամբ հոդվածում⁶ տեղ գտած այն կարծիքը, թե «էկոլոգիական իրավունք» եզրույթը որպես ռուսական իրավունքի ինքնուրույն ճյուղի անվանում սխալ է, կիրառություն է ստացել առանց գիտական հիմնավորման, քննարկումների և եղել է կամայականության դրսևորում: Նրա կարծիքով՝ առավել հիմնավոր է իրավունքի ճյուղն անվանել «Շրջակա միջավայրի իրավունք»:

Օ. Կոլբասովը հիմնավորում է, որ իրավունքի որևէ ճյուղի անվանման համար որպես հիմք ընդունվում է ոչ միայն համապատասխան կատեգորիայի իրավահարաբերությունների առարկայական ոլորտը, այլև մի շարք հանգամանքներ: Վերջինիս կարծիքով՝ «էկոլոգիա» եզրույթի ներքո չպետք է տեսնել միայն բնագիտական դիսցիպլինի անվանում. այն պետք է դիտարկել որպես մարդկային գործունեության ոլորտ, ո-

ՔԱՂԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

րոշակի պատմական իրողություն: Հիմնախնդիրը դիտարկելով այս հարթությունում՝ կարելի է եզրակացնել, որ իրավունքի այս ճյուղի անվանումը «էկոլոգիա» եզրույթով չէր կարող լինել կամայականություն:

Մեր կարծիքով՝ իրավունքի ճյուղի անվանումը որպես կամայականության դրսևորում դիտարկելը անհիմն է, քանի որ «էկոլոգիական իրավունք» եզրույթի օգտագործումը տվյալ դեպքում այն գիտական ընդհանրացումն է, որն իր տրամաբանական ավարտին է հասցնում այս հիմնախնդրի վերաբերյալ բանավեճը՝ ընդգրկելով օրգանապես փոխկապված, միմյանց լրացնող երկու խումբ հարաբերություններ՝ ռացիոնալ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության: Կցանկանալիք հավելել նաև, որ հասարակական գիտություններում բազմաթիվ են բնական գիտություններից փոխառված եզրույթները, որոնք ստացել են այլ՝ սկզբնական նշանակությունից տարբերվող բովանդակություն և կիրառվում են այլ իմաստով:

Տվյալ իրավունքի ճյուղի նյութի մշակվածության աստիճանը ընդգծելու համար փաստենք նաև, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղի համար ելակետային, առանցքային նշանակություն ունեցող սկզբունքների շրջանակը էկոլոգիական իրավունքի գիտությունում ամրագրվում է յուրահատուկ կերպով: Գիտական աղբյուրներում, որպես էկոլոգիական իրավունքի սկզբունքներ, գետնդրվում են Ռիոյի և Ստոկհոլմի համաժողովներում ընդունված հռչակագրերի՝ համապատասխանաբար 26 և 27 սկզբունքները, ինչը, համոզված ենք, անորոշ է միևնույն նպատակին ուղղված գործողությունների ելակետ համարվելու համար: Հեղինակները փորձում են որոշակիացնել էկոլոգիական օրենսդրության սկզբունքները՝ որպես այդպիսիք առանձնացնելով կայուն զարգացման, գոր-

ծունեության որոշակի տեսակի իրականացման, շրջակա միջավայրի պահպանության, շրջակա միջավայրի պահպանության կառավարման և էկոլոգիական անվտանգության ապահովման, բնօգտագործման սկզբունքները և այլն⁷: Ընդ որում՝ այդ փորձերն էականորեն չեն տարբերվում դեռևս 1980-ական թվականների սկզբունքների դասկարգումից⁸:

Եզրութաբանական հիմնախնդիրներ

Ինտեգրացման (միասնացման) և դիֆերենցացման (տարբերակման) գործընթացների արդյունքում ձևավորված էկոլոգիական իրավունքի գիտությունը ավանդաբար ընդգրկում է երկու խումբ հասարակական հարաբերություններ՝ բնական ռեսուրսների օգտագործում և շրջակա միջավայրի պահպանություն: Բնօգտագործման հարաբերությունները նախորդել են շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունների ձևավորմանը: Այս երկու խումբ հարաբերությունները և դրանք կարգավորող նորմերը սերտորեն փոխկապված են և պայմանավորում են մեկը մյուսին: Իհարկե, կան հարաբերություններ, որոնք ձևավորվում են միայն շրջակա միջավայրի պահպանության նպատակով, և հակառակը:

Եթե նախկինում բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության իրավունքները դիտարկվում էին որպես առանձին խումբ հարաբերություններ կարգավորող նորմերի ամբողջություն, և գրականության մեջ գերակայում էր այն կարծիքը, թե նորմերի այդ երկու խմբի միջև առկա տարբերությունների անտեսումը, այդ հարաբերությունների արհեստական միաձուլումը կարող են առաջացնել հասարակության համար անցանկալի հետևանքներ, մասնավորապես՝ բնության պահպանության շահերի տարրալուծում տնտեսական հարաբերությունների համակարգում⁹, ապա, **մեր համոզմամբ, միջավայրի պահպանության և բնօգտագործման հարաբերությունները կարգավորող նորմերի ոչ թե միաձուլումը, այլ դրանց տարանջատումն է ար-**

հետևական, իսկ բնության պահպանության շահերի ընդգծված առանձնացումը կարող է առաջացնել շատ ավելի անցանկալի հետևանքներ հասարակության համար:

Դեռևս 1986 թվականին ռուս իրավագետ Վովկը անհերքելի էր համարում այն, որ բնական օբյեկտի պահպանությունը ինքնուրույն հարց չէ կամ գործունեություն: Դա ածանցված է բնության օբյեկտի օգտագործման և շահագործման գործունեությունից, հետևաբար՝ ոլորտի իրավական կարգավորումը չի կարելի բաժանել երկու ինքնուրույն մասերի¹⁰:

Միջավայրի պահպանության գործունեության՝ բնական ռեսուրսների օգտագործումից ածանցված լինելը կամ գործունեության այդ երկու ուղղությունների կապը հնարավոր է հաստատել մի շարք օրինակներով: Ավանդաբար շրջակա կամ բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելման կամ նվազեցման գործունեություն համարվող ազդեցության գնահատման իրականացում գործող օրենսդրությամբ պահանջվում է այն դեպքերում, երբ նախատեսվող գործունեությունը կապված է բնական ռեսուրսների օգտագործման հետ, որի հետևանքով էական բացասական ազդեցության են ենթարկվելու բնական կամ շրջակա միջավայրի բաղադրամասերը: Չնարավոր է եզրակացնել, որ կանխարգելիչ բնույթ ունեցող գործունեության այս տեսակը հավասարապես վերաբերում է ինչպես ռեսուրսների օգտագործմանը, այնպես էլ միջավայրի պահպանությանը:

Կարծում ենք՝ այս ամենը հետևանք է մի շարք հասկացությունների ոչ հստակ ձևակերպման և ամրագրման ինչպես գիտական գրականությունում, այնպես էլ ընթացիկ օրենսդրությունում: Շփոթը հատկապես առկա է «բնական միջավայր» և «մարդուն շրջապատող միջավայր», «բնական օբյեկտ», «բնական ռեսուրս» և «բնական պաշար» հասկացությունների միջև, թեև գիտական որոշ աղբյուրներ դրանք հստակորեն բանաձևվում են¹¹:

Վերոգրյալ հասկացությունները ամրագրված չեն ԳՊ օրենսդրության մեջ, գուցե նաև շրջանակային օրենքի բացակայության պատճառով: Ճյուղային որոշ օրենսդրական ակտերում, օրինակ՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ԳՊ օրենքում տրվում են «բնական օբյեկտ» և «էկոհամակարգ» հասկացությունները, որոնք ոչ միայն չեն համամաստասխանում գիտական բնորոշումներին, այլև տեղ են գտել անհամաստասխան իրավական ակտում:

Կայուն զարգացման հայեցակարգ և նոոսֆերայի մասին տեսություն

Բավական անսպասելիորեն և առավելապես միջազգային կազմակերպությունների հովանու ներքո 1970-ական թվականներին ամբողջ աշխարհում սկսվեց բնության պահպանության գործընթաց: Այդ գործընթացի հիմնական խնդիրներից են (համենայնդեպս դրանք կարող ենք տարբերակել ըստ ուսումնասիրված գրականության) բնական համակարգերի ինքնավերարտադրության, ինքնավերականգման ապահովումը և մարդկային կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը՝ վերջինիս հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարման նպատակով: Ջարգացումները հանգեցրին մարդ-բնություն փոխհարաբերությունների հիմնախնդրին վերաբերող մոտեցումների, գաղափարների ձևավորմանը, որոնք խմբավորվում են ըստ տարբեր հայեցակարգերի և տեսությունների. բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքի հայեցակարգ, բնությանը չմիջամտելու հայեցակարգ (ձևակերպումը բնագրային համարում ենք անհաջող), նոոսֆերայի մասին տեսություն, տնտեսական զարգացման, պահանջմունքների և ազգաբնակչության թվաքանակի սահմանափակման հայեցակարգ և այլն¹²: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ դրանք այն գիտական տեսությունները կամ հումանիստական, քաղաքական, փիլիսոփայական գաղափարներն են, որոնց հիման վրա ձևավոր-

ՔԱՂԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

վել և գործառույթ է ռացիոնալ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունների ժամանակակից համակարգը:

Թեև այսօր և ապագայում հնարավոր չէ հարաբերությունների այդ համակարգը ձևավորել մեկ տեսության կամ հայեցակարգի հիման վրա, այդուհանդերձ, կայուն զարգացումը ժամանակակից ամենատարածված ու հաճախ շրջանառվող հայեցակարգն է: Կարծում ենք՝ ուշադրության արժանի է նաև Վերնադսկու նոոսֆերային տեսությունը:

ՄԱԿ-ի նախաձեռնությամբ 1983 թվականին ստեղծված Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային կոմիտեն (հայտնի է նաև «Բրունդլանդի կոմիտե» անվանմամբ, քանի որ վերջինիս նախագահ է եղել Նորվեգիայի նախկին վարչապետ Գրո Յարլեն Բրունդլանդը), քննարկելով և վերլուծելով շրջակա միջավայրի և բնական օբյեկտների օրեցօր վատթարացող վիճակը և դրա հետևանքները տնտեսական և սոցիալական զարգացման հեռանկարների առումով, չորս տարի անց հրապարակեց «Մեր ընդհանուր ապագան» վերտառությամբ երեք մասերից բաղկացած զեկույց: Հրապարակված զեկույցում կայուն զարգացումը սահմանված է հետևյալ կերպ. «Կայուն է համարվում այն զարգացումը, որը բավարարում է ներկա սերունդների պահանջները՝ չսահմանափակելով (without comprising) ապագա սերունդների՝ պահանջումների բավարարման կարողությունը»:¹³ Այս սկզբունքն իր հետագա զարգացումն է ստացել Մաստրիխտի և Ամստերդամի պայմանագրերում, ինչպես նաև Ռիոյի հռչակագրում և 21-րդ դարի օրակարգում՝ հաստատված ՄԱԿ-ի «Շրջակա միջավայր և զարգացում» վեհաժողովի կողմից: Այս վեհաժողովի ընթացքում հստակեցվեցին կայուն զարգացման երեք հիմնադրույթները. տնտեսական

զարգացում, սոցիալական զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն¹⁴: Մինչև այսօր կայուն զարգացման հայեցակարգը եղել և շարունակում է մնալ ներպետական և միջազգային տարբեր մակարդակներում ընթացող քննարկումների առարկա: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող (այդ թվում՝ միջազգային համագործակցության մակարդակում) թվով 12 կազմակերպություն տվել են կայուն զարգացման՝ Բրունդլանդի կոմիտեի սահմանումից տարբերվող սահմանումներ¹⁵: Նման բազմազանության պայմաններում անգամ հնարավոր չէ արձանագրել տրվող սահմանումների առավելությունը դրանց սկզբնաղբյուրի համեմատությամբ՝ որոշակիության և հիմնավորվածության առումով: Եթե անգամ միջազգային համագործակցության արդյունքում հնարավոր լինի հասնել կոնվենցիոնալ սահմանման կամ իրավական ամրագրման, մեր կարծիքով, վերջինիս նույնպես բնորոշ կլինեն բովանդակային անորոշությունը և սոցիալական, մշակութային, քաղաքական, տնտեսական տարբեր ավանդույթներ և փորձ ունեցող հասարակություններին հատուկ այլ դրսևորումներ:

Ուսումնասիրելով կայուն զարգացման կոնցեպցիայի պատմությունը՝ հեղինակները եզրակացնում են, որ չի կարող լինել կայուն զարգացման ընդհանուր բնորոշում, և յուրաքանչյուր հասարակություն պետք է գտնի այն ճանապարհը, որով կքննարկվեն և կհամադրվեն տարբեր սոցիալական խմբերի շահերը¹⁶: Ի լրումն այս ամենի և հիմք ընդունելով վերջին տարիների զարգացումները՝ կարելի արձանագրել, որ էկոլոգիական շահերի լիարժեք ինտեգրումը հասարակական այլ շահերի համակարգին բազմաթիվ պետություններում ընթանում է բավական դանդաղ: Տնտեսական հարաբերությունների զարգացման ներկայիս մակարդակն անպայմանորեն առաջ է մղում հասարակության որոշակի խմբերի շահերը՝ դարձնելով դրանք գերակա մյուսների համեմատությամբ:

Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Ռեդքլիֆի կարծիքով՝ կայուն զարգացման զեկուլցն առաջինն էր աշխարհում, որը շրջակա միջավայրի պահպանության գործունեությունը հաշվի էր առնում տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման հեռանկարների համակարգում: Ըստ նրա՝ Բրունդեյլանդի կոմիտեի կայուն զարգացման բնորոշումը դրվել է գործածության մեջ բոլորի ցանկությամբ, սակայն գործընթացի վերաբերյալ համաձայնության բացակայության պայմաններում, իսկ առաջին հայացքից պարզ սահմանումը միաժամանակ նաև մոլորեցնող է: Նրա համար անհասկանալի են «ապագա սերունդների պահանջումները» բովանդակությունը և այն, թե ինչպիսին կարող են լինել մարդկային պահանջումները տարբեր հասարակություններում¹⁷:

Համարելով հասարակական զարգացման հեռանկարների վերաբերյալ հայեցակարգ, սկզբունքների ամբողջություն կամ գործընթաց՝ հեղինակների մի խումբ կայուն զարգացումը դիտարկում է նաև որպես շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմքում դրված տեսություն: **Այս հայեցակարգն իրականում զուրկ է գիտական տեսության, պարադիգմայի վերաճելու ներուժից, քանի որ, առաջին հերթին, հակասում է դիալեկտիկայի օրենքներին**¹⁸: Այդ օրենքների համաձայն՝ զարգացումը տեղի է ունենում հակադրությունների և պայքարի միասնության, բացասման բացասման և քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման արդյունքում: Մեր այս կարծիքը հիմնավորելու համար բերենք մեկ օրինակ շրջակա միջավայրի պահպանության ոլորտից: Եթե 1960-1970-ական թվականներին չարձանագրվեր շրջակա միջավայրի որակի վատթարացում (տվյալ պարագայում մենք հարկ ենք համարում վերանալ գործընթացի հիմնա-

վորված լինելու կամ չլինելու մասին գիտական բանավեճից) և չձեռնարկվեին միջոցներ դրա հաղթահարման նպատակով, ապա չէր արձանագրվի օրինակ՝ բնական ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիական առաջընթաց: Հետևաբար՝ կայուն զարգացման հայեցակարգը կարելի է համարել ուտոպիստական, սխոլաստիկ, ոչ գիտական և առավելապես էթիկայի ոլորտին վերաբերող: Այս համատեքստում կցանկանայինք նշել նաև, որ «կայուն զարգացում» եզրույթի օգտագործումը և՛ գիտական հանրության, և՛ հասարակության լայն խմբերի շրջանում կարող է առաջացնել «անհարմարավետության» զգացում տարբեր պատճառներով (եզրույթի բովանդակային անորոշություն, գիտական ոչ բավարար հիմնավորվածություն և այլն), ինչն էլ իր հերթին կհանգեցնի էկոլոգիական շահերի ինտեգրման գործընթացի դանդաղեցմանը:

Եզրակացություն

Բնական ռեսուրսների պետական կառավարման իրավական կարգավորման հիմնահարցերի ուսումնասիրություն իրականացնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնել էկոլոգիական իրավունքի ճյուղի պրոբլեմատիկայի բավականին ընդգրկուն լինելը: Գիտական բազմաթիվ հիմնահարցերի առկայությունը խոչընդոտներ է հարուցում ուսումնասիրությունների իրականացման ընթացքում՝ միաժամանակ ուսումնասիրողին տրամադրելով բավականաչափ էմպիրիկ նյութ: Կարծում ենք՝ էկոլոգիական իրավունքի գիտության, համատեսական, այլ ճյուղային իրավաբանական գիտությունների ձեռքբերումների հիման վրա և էմպիրիկ նյութի տեսական իմաստավորման արդյունքում հնարավոր կլինի հաղթահարել հիմնախնդիրների բավական ընդարձակ շրջանակ, որոնք առնչվում են նաև բնական ռեսուրսների պետական կառավարման իմաստիտուտին:

ՔԱՂԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- ¹ Տե՛ս Սեդրակյան Բ.Վ. Экология и система советского права. Правовые проблемы экологии. Сборник, Авторы Лисицын Е.Н., Петров В.В., Петров Г.В., Рябов А.А., М., 1990, էջ 17-18:
- ² Տե՛ս օրինակ՝ Վ. Бжезинский. Правовая охрана окружающей среды, перевод с польского Прудковой Н.Р. и Рабиновича Г.Б., под редакцией Колбасова О.С.. М., 1976: Боголепо Р.Д., Булатов Г.Г. Ответственность за нарушение законодательства об охране природы. М., 1973: Ерофеев Б.В. Советское экологическое право. Общая часть, учебное пособие. М., 1988: Андрейцев В.И. Правовое обеспечение рационального природопользования предприятий и объединений АПК, 1989: Демино С.А. Закон на страже природы, отв ред Сухаров А.Я., М., 1987:
- ³ Փիլոսոփանության չափանիշների մասին ավելի մանրամասն տե՛ս Канке В.А. Основные философские направления и концепции науки, учебное пособие, 3-е изд., перераб. и доп., М., 2008, էջ 166-171:
- ⁴ Տե՛ս Дубовик О.П. Экологическое право, учебник, М., 2005, էջ 31:
- ⁵ Տե՛ս Колбасов О.С. Терминологические блуждания в экологии.// Журнал “Государство и право”. 1999, N 10, էջ 27-37:
- ⁶ Տե՛ս Бринчук М.М. О понятийном аппарате экологического права.// Журнал “Государство и право”. 1998, N 9, էջ 20-28:
- ⁷ Տե՛ս Игнатъева И.А. Принципы экологического законодательства.// Журнал “Государство и право”. 2003, N 9, էջ 41:
- ⁸ Տե՛ս Ерофеев Б.В., նշված աշխատությունը, էջ 26-30:
- ⁹ Տե՛ս Սեդրակյան Բ.Վ. Экология и система советского права. Правовые проблемы экологии. Сборник, Авторы Лисицын Е.Н., Петров В.В., Петров Г.В., Рябов А.А., М., 1990, էջ 25:
- ¹⁰ Տե՛ս Вовок Ю.А. Советское природоресурсовое право и правовая охрана окружающей среды. Общая часть, Харьков, 1986, էջ 5:
- ¹¹ Տե՛ս օրինակ՝ Природопользование, охрана окружающей среды и экономики: теория и практикум, учеб. пособие, под. ред. А.П. Хаустова., М., 2009: Экологический энциклопедический словарь, главный редактор А.С. Монин., М., 1999: Реймерс Н.Ф. Природопользование. Словарь —справочник, М., 1990:
- ¹² Տե՛ս М. М. Бринчук Экологическое право. учебник, 2-е изд, перераб. и доп, М., 2005, էջ 31-35:
- ¹³ Տե՛ս United Nations. Report of the World Commission on Environment and Development, General Assembly Resolution 42/187, 11 December 1987.
- ¹⁴ Տե՛ս Schmidt, Uwe E., History of sustainable development. The Faculty of Forest and Environmental Sciences. Freiburg, Germany, 2008, էջ 2:
- ¹⁵ Տե՛ս Mark Mawkinney Sustainable development: understanding the green debates. Blackwell Publishing, 2002, էջ 3:
- ¹⁶ Տե՛ս Schmidt, Uwe E., նշված աշխատությունը, էջ 8:
- ¹⁷ Տե՛ս Redcliff, Michael Sustainable development (1987-2005). An oxymoron comes of age. Journal of “Sustainable Development”. (13), 2005, էջ 212—227. (Published online, 22 July 2005, www.interscience.wiley.com, էջ 213-214:
- ¹⁸ Նման հայեցակարգի հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարությունը նախատեսում է նշակել «Շրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգիրքը: Անհասկանալի է հատկապես այն, թե ինչպիսի դրսևորում է ունենալու այդ հայեցակարգը օրենսգրքի նախագծում:

К ВОПРОСУ О ТЕОРИТИЧЕСКИХ ОСНОВАХ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ ПРИРОДНЫМИ РЕСУРСАМИ

Гор МОВСИСЯН

*Аспирант кафедры гражданского
процесса ЕГУ*

В статье, посвященной теоретическим основам государственного управления природными ресурсами, автор обсуждает некоторые проблемы генезиса экологического права и его научного статуса в системе юридических наук. В статье также представлены воз-

можные пути преодоления проблем связанных с понятийным аппаратом института государственного управления природными ресурсами.

В результате анализа научных источников автор приходит к следующему заключению: на основе научного материала общетеоретических, отраслевых юридических наук (в том числе экологического права) и в результате теоретического осмысления эмпирического материала возможно решить обширный круг вышеуказанных проблем науки экологического права.
